ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հունվարի 2013թ. թիվ 14-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2013 ԹՎԱԿԱՆԻՆ ՕԲՅԵԿՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. հունվարի 30-ի թիվ 134-Ն որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և բնակչության ուսուցման կարգի» 5-րդ կետի և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 25.01.2013թ. թիվ 9-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2013 թվականի հիմնական միջոցառումների պլանի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով՝

Ո ր ո շ ու մ ե մ.

2013թ. մարտի 1-ին, ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում, Վանաձորի պետական բժշկական քոլեջում, Վանաձորի թիվ 4 և Գուգարքի թիվ 2 հիմնական դպրոցներում, Վանաձորի թիվ 9, 24, Ագարակի միջնակարգ դպրոցներում և Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցում անցկացնել օբյեկտային վարժանքներ «Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման և տարահանման միջոցառումների իրականացումը» թեմայով, իսկ Հայաստանի պետական ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում, Եվրոպական տարածաշրջանային կրթական ակադեմիայում, Վանաձորի թիվ 1, 3 և 6 հիմնական դպրոցներում, Վանաձորի թիվ 23, Լեռնանցքի միջնակարգ դպրոցներում և Տաշիրի ավագ դպրոցում անցկացնել դասախոսություններ «Քաղաքացիական պաշտպանության միջազգային կազմակերպությունը» և «Հրդեհային անվտանգությունը ուսումնական հաստատություններում» թեմաներով:

1. Վարժանքների և դասախոսությունների անցկացման նպատակներն են.

1) ստուգել մարզի բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների, հանրակրթական դպրոցների ղեկավար կազմի, աշխատողների և ուսուցանվողների պատրաստականությունը հրդեհի դեպքում.

2) ուսուցանել նրանց հրդեհի ժամանակ պահելաձևին, վարքի կանոններին և հմտություններին:

2. Վարժանքի կազմակերպման և արդյունավետ անցկացման նպատակով վարժանքի ղեկավարներ նշանակել վերը նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին:

3. Վերը նշված բարձրագույն, միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների և հանրակրթական դպրոցների ղեկավարներին.

Մինչև ս/թ փետրվարի 22-ը՝

1) ճշգրտել կազմակերպության քաղաքացիական պաշտպանության պլանները և գործողությունների պլան-ժամանակացույցերը.

2) ճշգրտել կազմակերպության տարահանման սխեմաները.

3) օբյեկտային վարժանքի նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ:

4. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

1) աջակցել Լոռու մարզային փրկարարական վարչությանը վարժանքների մասնակից մարզային ենթակայության ուսումնական հաստատություններին մեթոդական օգնություն ցուցաբերելու, վարժանքների և դասախոսությունների նախապատրաստման ու անցկացման գործում.

2) մինչև ս/թ փետրվարի 12-ը սույն որոշման մասին իրազեկել վարժանքների և դասախոսությունների մասնակիցներին:

5. Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

Օբյեկտային վարժանքների նախապատրաստման փուլում մասնակիցների հետ, ըստ վարժանքի թեմայի, անցկացնել ուսումնական պարապմունքներ՝ ներգրավելով տվյալ տարածաշրջանները սպասարկող հրշեջ փրկարարական ջոկատների հրամանատարներին:

6. Վարժանքների և դասախոսությունների անցկացման ընթացքի հսկողությունն իրականացնել Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2013թ. հունվարի 31
ք.Վանաձոր